ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՕՖԵՐՏԱ

Ֆիզիկական անձանց համար

Սույն փաստաթուղթը «Հայաստանի բանկերի միություն» հասարակական կազմակերպության կողմից ֆիզիկական անձանց ուղղված հրապարակային առաջարկ է՝ կնքելու ուսումնական ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր: Գրանցվելով և սույն օֆերտան ստորև սահմանված կարգով ընդունելով՝ անձը հաստատում է, որ կարդացել, հասկացել և անվերապահորեն ընդունել է դրա պայմանները:

1. Ընդհանուր դրույթներ և հիմնական հասկացություններ

1.1. Ծառայություն մատուցող՝ «Հայաստանի բանկերի միություն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ ՀԲՄ), որն իր Ուսումնական կենտրոնի միջոցով կազմակերպում և մատուցում է ուսումնական ծառայություններ:

1.2. Մասնակից՝ 18 տարին լրացած գործունակ ֆիզիկական անձը կամ մինչև 18 տարին լրանալը օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակություն ձեռք բերած անձը, որը գրանցվել և ընդունել է սույն օֆերտան:

1.3. Ծրագիր՝ ՀԲՄ-ի կողմից կազմակերպվող դասընթացը, վերապատրաստումը, սեմինարը, ուսումնական կամ որակավորման ծրագիրը, քննությանը նախապատրաստումը, գիտելիքի ստուգումը կամ այլ կրթական միջոցառումը, որի անհատական պայմանները հրապարակված են Կայքում:

1.4. Կայք՝ www.uba.am ինտերնետային կայքը, ներառյալ դրա՝ Ուսումնական կենտրոնին վերաբերող էջերը և գրանցման էլեկտրոնային ձևերը:

1.5. Ծրագրի էջ՝ Կայքի այն էջը, որտեղ մինչև գրանցումը ներկայացվում են տվյալ Ծրագրի հիմնական բնութագրերը՝ անվանումը, բովանդակությունը, ձևաչափը, վայրը կամ առցանց հարթակը, լեզուն, դասախոսը կամ կազմակերպիչը, մեկնարկը, տևողությունը, ժամանակացույցը, մասնակցության նախապայմանները, գինը, վճարման պայմանները, հավաստագրման կամ քննության պայմանները և այլ հատուկ տեղեկություններ:

1.6. ՀԲՄ-ի տվյալներն են՝ անվանում՝ «Հայաստանի բանկերի միություն» ՀԿ, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կորյունի փողոց 19ա, 6-րդ հարկ, հեռախոս՝ +374 60 522233, Ուսումնական կենտրոն՝ +374 99 527731, էլեկտրոնային փոստ՝ learning@uba.am, կայք՝ www.uba.am:

1.7. Սույն օֆերտան, համապատասխան Ծրագրի էջը, գրանցման ժամանակ Մասնակցին ցուցադրված պայմանները, ՀԲՄ-ի կողմից ուղարկված գրանցման հաստատումը և Կայքի Գաղտնիության քաղաքականությունը միասին կազմում են կողմերի միջև կնքված պայմանագիրը: Հակասության դեպքում տվյալ Ծրագրի համար հատուկ և Մասնակցին մինչև գրանցումը ներկայացված պայմանները գերակայում են ընդհանուր պայմանների նկատմամբ:

2. Պայմանագրի առարկան

2.1. ՀԲՄ-ն պարտավորվում է կազմակերպել և Մասնակցին մատուցել ընտրված Ծրագրով նախատեսված ուսումնական ծառայությունները, իսկ Մասնակիցը պարտավորվում է ընդունել ծառայությունները և, եթե Ծրագիրը վճարովի է, վճարել դրանց համար:

2.2. Ծառայությունների ծավալը, արդյունքները և մատուցման ժամկետները որոշվում են Ծրագրի էջով և գրանցման հաստատմամբ: Ծրագրի նկարագրությունը և գովազդային նյութերը պայմանագրի մաս են այնքանով, որքանով պարունակում են տվյալ Ծրագրի հստակ

պայմաններ և չեն փոփոխվել մինչև պայմանագրի կնքումը Մասնակցին պատշաճ ծանուցմամբ:

2.3. ՀԲՄ-ն իրավունք ունի ծառայությունների մատուցմանը ներգրավելու դասախոսների, փորձագետների, քննություն կամ հավաստագրում իրականացնող և տեխնիկական աջակցություն տրամադրող երրորդ անձանց՝ պահպանելով սույն պայմանագրով ՀԲՄ-ի ստանձնած պարտավորությունները:

2.4. Եթե Ծրագիրը կազմակերպվում է միջազգային կամ այլ գործընկեր կազմակերպության մասնակցությամբ, այդ կազմակերպության՝ նախապես հրապարակված քննության, հավաստագրման, հարթակի օգտագործման կամ մասնագիտական վարքագծի կանոնները կիրառվում են համապատասխան մասով: Դրանք չեն կարող սահմանափակել Մասնակցի՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պարտադիր իրավունքները:

3. Պայմանագրի կնքումը և գրանցումը

3.1. Սույն օֆերտան համարվում է ընդունված, և պայմանագիրը՝ գրավոր ձևով կնքված, երբ Մասնակիցը՝

- լրացնում և ուղարկում է Ծրագրի գրանցման ձևը՝ տրամադրելով պահանջվող ամբողջական ու հավաստի տվյալները,
- վճարովի Ծրագրի դեպքում կատարում է վճարումը կամ ստանում է ՀԲՄ-ի գրավոր հաստատումը, եթե վճարումը նախատեսված է հաշվի հիման վրա կամ այլ ժամկետում: Անվճար Ծրագրի դեպքում պայմանագիրը կնքվում է ՀԲՄ-ի գրանցման հաստատումը Մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկելու պահից:

3.2. Մասնակիցը պարտավոր է մինչև պատվերը ձևակերպելը ստուգել ընտրված Ծրագիրը, գինը, ժամանակացույցը, ձևաչափը և իր կոնտակտային տվյալները:

3.3. ՀԲՄ-ն մինչև ծառայության մատուցումն սկսելը Մասնակցի նշած էլեկտրոնային փոստին ուղարկում է գրանցման հաստատումը և սույն պայմանները կամ դրանց անփոփոխ պահպանման հնարավորություն տվող հղումը կամ ֆայլը:

3.4. ՀԲՄ-ն կարող է չհաստատել կամ չեղարկել գրանցումը, եթե Ծրագրի տեղերը սպառվել են, Մասնակիցը չի բավարարում հրապարակված նախապայմանները, չի կատարել վճարումը սահմանված ժամկետում, ներկայացրել է ակնհայտ ոչ հավաստի տվյալներ կամ նախկինում էականորեն խախտել է ուսումնական գործընթացի կանոնները: Վճարված գումարը վերադարձվում է, եթե գրանցման չհաստատումը պայմանավորված չէ արդեն մատուցված ծառայությամբ կամ Մասնակցի համար փաստացի կատարված և օրենքով թույլատրելի ծախսերով:

3.5. Գրանցումն անձնական է: Այլ անձով փոխարինումը հնարավոր է միայն ՀԲՄ-ի նախնական գրավոր համաձայնությամբ և տվյալ Ծրագրի նախապայմանները փոխարինող անձի կողմից բավարարելու դեպքում:

4. Գինը և վճարման կարգը

4.1. Ծրագրի գինը և վճարման արժույթը նշվում են Ծրագրի էջում ու Մասնակցին ցուցադրվում են մինչև պատվերի հաստատումը: Գինը ներառում է օրենքով նախատեսված հարկերը և պարտադիր վճարները:

4.2. Վճարումը կատարվում է Կայքում հասանելի եղանակով կամ ՀԲՄ-ի տրամադրած վճարային տվյալներով: Բանկային, քարտային կամ այլ վճարային ծառայություն մատուցողի միջնորդավճարը կրում է Մասնակիցը:

4.3. Վճարումը համարվում է կատարված ՀԲՄ-ի հաշվին գումարը մուտքագրվելու պահից: ՀԲՄ-ն տրամադրում կամ հասանելի է դարձնում վճարումը հավաստող փաստաթուղթ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.4. Ձեղչերը կիրառվում են Ծրագրի էջում նշված պայմաններով: Մի քանի զեղչ միաժամանակ չի կիրառվում, եթե Ծրագրի էջում այլ բան նախատեսված չէ: Խմբային զեղչը կիրառվում է միայն հրապարակված նվազագույն քանակի և նույն կազմակերպությունից մասնակիցների գրանցման պայմանների պահպանմամբ:

5. Պայմանագրից հրաժարվելը և գումարի վերադարձը

5.1. Կայքի կամ հեռավար հաղորդակցության այլ միջոցի օգտագործմամբ կնքված պայմանագրի դեպքում Մասնակիցը կարող է առանց պատճառաբանության հրաժարվել պայմանագրից դրա կնքման օրվանից 5 օրվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան դասընթացի օրվանից 3 օր առաջ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Հրաժարվելու համար Մասնակիցը մինչև ժամկետի ավարտը հստակ հայտարարություն է ուղարկում learning@uba.am հասցեին կամ օգտագործում է Կայքում հասանելի ձևը: Կարող է օգտագործվել սույն օֆերտայի Հավելված 1-ի օրինակելի ձևը:

5.2. Հրաժարման մասին պատշաճ ծանուցում ստանալու դեպքում ՀԲՄ-ն, հաշվի առնելով 5.3 կետով նախատեսված հաշվարկը, ոչ ուշ, քան 14 օրվա ընթացքում վերադարձնում է Մասնակցից ստացած վերադարձման ենթակա վճարները նույն վճարման եղանակով, եթե Մասնակիցը չի համաձայնել այլ եղանակի, և այդ եղանակը տեխնիկապես հնարավոր է:

5.3. Եթե Մասնակիցը խախտել է պայմանագրից հրաժարվելու 5.1. կետով նշված ժամկետները, ապա ՀԲՄ-ն իրավունք ունի չվերադարձնել վճարված գումարը՝ կամ վերադարձնել պահելով ՀԲՄ կողմից կատարված ծախսերը կամ վնասները:

5.4. Պարզապես դասին չներկայանալը հրաժարման ծանուցում չի համարվում: Չներկայանալու պատճառով բաց թողնված դասի վերականգնումը կամ գումարի վերադարձը կատարվում է միայն Ծրագրի էջով նախատեսված լինելու, ՀԲՄ-ի համաձայնության կամ օրենքով պարտադիր լինելու դեպքում: Սույն կետը չի սահմանափակում Մասնակցի՝ 5.1 կետ նախատեսված կարգով պայմանագրից հրաժարվելու իրավունքը:

5.5. Վերադարձի համար անհրաժեշտ նույնականացման և բանկային տվյալների տրամադրման ուշացումը համապատասխան չափով երկարաձգում է վերադարձի տեխնիկական կատարման ժամկետը, եթե ՀԲՄ-ն առանց այդ տվյալների օբյեկտիվորեն չի կարող կատարել վերադարձը:

6. Ծրագրի փոփոխումը, հետաձգումը և չեղարկումը

6.1. ՀԲՄ-ն կարող է ողջամիտ պատճառներով փոխել դասախոսի անձը, առանձին թեմաների հաջորդականությունը, լսարանը կամ առցանց հարթակը, եթե փոփոխությունը չի նվազեցնում Ծրագրի էական բովանդակությունն ու որակը: Փոփոխության մասին Մասնակիցը ծանուցվում է հնարավորինս շուտ:

6.2. Ծրագրի մեկնարկի, ժամանակացույցի, ձևաչափի, ընդհանուր տևողության կամ այլ էական պայմանի փոփոխման դեպքում Մասնակիցը կարող է ընդունել փոփոխությունը, տեղափոխվել ՀԲՄ-ի առաջարկած համարժեք Ծրագրի կամ հրաժարվել պայմանագրից և ստանալ չմատուցված ծառայության համար վճարված գումարը:

6.3. Եթե ՀԲՄ-ն չեղարկում է Ծրագիրը կամ չի կարող այն մատուցել, Մասնակցին առաջարկվում է այլ ժամանակ կամ համարժեք Ծրագիր: Մասնակցի չհամաձայնելու դեպքում վճարված գումարը վերադարձվում է ամբողջությամբ, իսկ մասամբ մատուցված Ծրագրի

դեպքում՝ չմատուցված մասի չափով, բացառությամբ ՀԲՄ-ի խախտման հետևանքով ամբողջ պայմանագրից հրաժարվելու՝ օրենքով նախատեսված դեպքերի:

6.4. Մասնակիցների նվազագույն քանակ չհավաքվելը կարող է լինել Ծրագրի հետաձգման կամ չեղարկման հիմք:

7. ՀԲՄ-ի իրավունքներն ու պարտականությունները

7.1. ՀԲՄ-ն պարտավոր է՝

- մինչև պայմանագրի կնքումը հայերենով տրամադրել Ծրագրի և պայմանագրի վերաբերյալ անհրաժեշտ, ստույգ և հասկանալի տեղեկատվություն,
- ծառայությունները մատուցել հրապարակված ծավալով, ժամկետներում և պատշաճ որակով,
- ապահովել ուսումնական գործընթացի կազմակերպչական և տեխնիկական ողջամիտ պայմանները,
- Մասնակցին ժամանակին տեղեկացնել էական փոփոխությունների մասին,
- պահպանել Մասնակցի անձնական տվյալների գաղտնիությունն ու անվտանգությունը և
- օրենքով ու Ծրագրի պայմաններով նախատեսված դեպքում տրամադրել մասնակցությունը, քննության արդյունքը կամ որակավորումը հավաստող փաստաթուղթ:

7.2. ՀԲՄ-ն իրավունք ունի՝

- սահմանել Ծրագրին մասնակցելու նախապայմաններ, տեղերի առավելագույն քանակ, գնահատման և հավաստագրման չափանիշներ,
- Մասնակցից պահանջել պահպանել ուսումնական, անվտանգության, ակադեմիական բարեվարքության և առցանց հարթակի օգտագործման կանոնները,
- ժամանակավորապես սահմանափակել կամ դադարեցնել Մասնակցի մասնակցությունը 8.3 կետով նախատեսված էական խախտումների դեպքում՝ նախապես կամ անհետաձգելի դեպքերում անմիջապես ծանուցելով նրան և
- Ծրագրի կազմակերպման համար ուղարկել պայմանագրի կատարմանն առնչվող հաղորդագրություններ:

8. Մասնակցի իրավունքներն ու պարտականությունները

8.1. Մասնակիցն իրավունք ունի ստանալու Ծրագրի վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն, օգտվելու պատշաճ որակի ծառայություններից, ներկայացնելու հարցեր և բողոքներ, ինչպես նաև իրականացնելու օրենքով և սույն պայմանագրով նախատեսված մյուս իրավունքները:

8.2. Մասնակիցը պարտավոր է՝

- տրամադրել ճիշտ և թարմ տվյալներ ու ՀԲՄ-ին տեղեկացնել դրանց փոփոխության մասին,
- ժամանակին վճարել Ծրագրի գինը,
- պահպանել ժամանակացույցը, դասախոսի ողջամիտ ցուցումները, ներքին կարգապահությունը և մյուս մասնակիցների իրավունքները,
- անձամբ կատարել գնահատման առաջադրանքները և չօգտագործել արգելված օգնություն,
- առցանց Ծրագրի համար ապահովել անհրաժեշտ սարք, ինտերնետային կապ, ծրագրային ապահովում և իր մուտքային տվյալների գաղտնիությունը և

- չփոխանցել Ծրագրի հասանելիությունը, նյութերը կամ քննության հարցերը երրորդ անձանց:

8.3. Բռնությունը, վիրավորական կամ խտրական վարքագիծը, ուսումնական գործընթացին էական խոչընդոտելը, այլ անձի փոխարեն մասնակցելը, խաբեությունը, գնահատման նյութերի ապօրինի տարածումը կամ մտավոր սեփականության իրավունքների էական խախտումը կարող են հիմք լինել մասնակցությունը դադարեցնելու համար: Այդ դեպքում կողմերի հաշվարկները կատարվում են փաստացի մատուցված ծառայությունների և ՀԲՄ-ի փաստացի ծախսերի հիման վրա՝ չսահմանափակելով կողմերի՝ օրենքով նախատեսված մյուս պահանջները:

9. Հաճախումների, գնահատման և հավաստագրման պայմանները

9.1. Մասնակցության, հաճախումների նվազագույն շեմը, առաջադրանքների, քննությունների, անցողիկ միավորի և հավաստագրի տրամադրման հատուկ պայմանները նշվում են Ծրագրի էջում կամ մինչև գրանցումը հասանելի դարձված կանոններում:

9.2. Հավաստագիրը կամ որակավորումը տրվում է միայն հրապարակված չափանիշները բավարարած Մասնակցին: Ծրագրին մասնակցելը ինքնին չի երաշխավորում քննության հանձնումը, որակավորում ստանալը, աշխատանքի տեղավորումը, պաշտոնի բարձրացումը կամ որևէ երրորդ անձի կողմից ճանաչումը, եթե ՀԲՄ-ն այդպիսի երաշխիք հստակ չի ստանձնել:

9.3. Մասնակիցը պարտավոր է ՀԲՄ-ի պահանջով ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ՝ քննության, հավաստագրման կամ անձնական մուտքով հարթակ օգտագործելու ժամանակ:

9.4. Արդյունքի կամ գնահատման վերաբերյալ առարկությունը ներկայացվում է learning@uba.am հասցեին արդյունքը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, եթե տվյալ Ծրագրի կանոններով այլ ժամկետ սահմանված չէ: ՀԲՄ-ն կամ իրավասու գործընկերը այն քննում է կիրառելի գնահատման կանոններով:

10. Ուսումնական նյութերը և մտավոր սեփականությունը

10.1. Ծրագրի տեսագրությունները, շնորհանդեսները, առաջադրանքները, թեստերը, ձեռնարկները, ապրանքային նշանները և այլ նյութերը պաշտպանվում են մտավոր սեփականության մասին օրենսդրությամբ և պատկանում են ՀԲՄ-ին կամ համապատասխան իրավատիրոջը:

10.2. Մասնակցին տրվում է նյութերը միայն անձնական ուսուցման նպատակով օգտագործելու սահմանափակ, ոչ բացառիկ և չփոխանցվող իրավունք՝ Ծրագրի էջում նշված ժամանակահատվածում:

10.3. Առանց իրավատիրոջ նախնական գրավոր համաձայնության արգելվում է դասերի ձայնագրումը կամ տեսագրումը, նյութերի վերարտադրումը, տարածումը, հրապարակումը, վաճառքը, հանրային ցուցադրումը, հասանելիության տվյալների փոխանցումը կամ դրանց հիման վրա մրցակցող ուսումնական նյութի ստեղծումը, բացառությամբ օրենքով ուղղակիորեն թույլատրված օգտագործման:

10.4. Եթե ՀԲՄ-ն նախատեսում է դասի տեսաձայնագրում, Մասնակիցը դրա նպատակի, օգտագործման շրջանակի և իր ընտրության հնարավորությունների մասին տեղեկացվում է նախապես: Մարքեթինգային նպատակով Մասնակցի պատկերի կամ ձայնի օգտագործումը համարվում է մասնակցի կողմից տրված, եթե վերջինս գրավոր նախապես չի առարկում:

11. Անձնական տվյալների մշակում

11.1. ՀԲՄ-ն Մասնակցի անձնական տվյալները մշակում է պայմանագիրը կնքելու և կատարելու, վճարումը կազմակերպելու, ուսումնական գործընթացն ու գնահատումը վարելու, հավաստագիր տրամադրելու, օրենսդրական պարտականությունները կատարելու և իրավունքները պաշտպանելու նպատակներով՝ ՀՀ օրենսդրությանը և Կայքում հրապարակված Գաղտնիության քաղաքականությանը համապատասխան:

11.2. Տվյալները կարող են անհրաժեշտ ծավալով փոխանցվել վճարային ծառայություն մատուցողներին, դասախոսներին, տեխնիկական հարթակների օպերատորներին, քննություն կամ հավաստագրում իրականացնող գործընկերներին և օրենքով իրավասու մարմիններին: Միջազգային գործընկերոջը կամ արտասահմանում գործող հարթակին տվյալների փոխանցման պայմանները ներկայացվում են Գաղտնիության քաղաքականությամբ կամ առանձին ծանուցմամբ:

11.3. Մասնակիցը կարող է օգտվել իր տվյալներին հասանելիության, դրանք ուղղելու, արգելափակելու, ոչնչացնելու, մշակման դեմ առարկելու կամ համաձայնությունը հետ կանչելու՝ օրենքով նախատեսված իրավունքներից՝ դիմելով learning@uba.am կամ uba@uba.am հասցեին: Համաձայնության հետկանչը չի ազդում մինչև հետկանչը կատարված մշակման օրինականության վրա և չի վերացնում օրենքով կամ պայմանագրով անհրաժեշտ տվյալների պահպանման պարտականությունը:

11.4. Գովազդային կամ նոր Ծրագրերի վերաբերյալ հաղորդագրությունները ուղարկվում են միայն Մասնակցի առանձին համաձայնությամբ, որը կարող է հետ կանչվել յուրաքանչյուր պահին: Այդ համաձայնությունը Ծրագրին մասնակցելու պայման չէ:

12. Պատասխանատվությունը և անհաղթահարելի ուժը

12.1. Կողմերը պատասխանատվություն են կրում իրենց պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար՝ ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով: Սույն պայմանագրի որևէ դրույթ չի սահմանափակում սպառողի՝ օրենքով նախատեսված պարտադիր իրավունքները:

12.2. ՀԲՄ-ն պատասխանատվություն չի կրում Մասնակցի սարքի, ծրագրային ապահովման, էլեկտրամատակարարման կամ ինտերնետային կապի խափանման, սխալ էլեկտրոնային հասցեի, երրորդ անձին փոխանցված մուտքային տվյալների կամ Մասնակցից կախված այլ պատճառներով ծառայությունից չօգտվելու համար, եթե ՀԲՄ-ն կատարել է ծառայությունը հասանելի դարձնելու իր պարտավորությունը:

12.3. Կողմն ազատվում է պատասխանատվությունից այնքանով, որքանով պարտավորության խախտումը հետևանք է եղել պայմանագրի կնքումից հետո ծագած, իր ողջամիտ վերահսկողությունից դուրս գտնվող և կանխելն անհնար անհաղթահարելի ուժի հանգամանքի: Այդ կողմը մյուս կողմին ծանուցում է հնարավորինս շուտ և ձեռնարկում է ողջամիտ միջոցներ հետևանքները նվազեցնելու համար:

12.4. Եթե անհաղթահարելի ուժի հետևանքով Ծրագրի մատուցումն էականորեն հետաձգվում կամ անհնար է դառնում, ՀԲՄ-ն առաջարկում է նոր ժամանակացույց կամ համարժեք Ծրագիր, իսկ Մասնակցի չհամաձայնելու դեպքում վերադարձնում է չմատուցված ծառայության համար վճարված գումարը՝ օրենքով նախատեսված կարգով:

13. Հաղորդակցությունները և բողոքների քննությունը

13.1. Պայմանագրի կատարման հետ կապված ծանուցումները ուղարկվում են Մասնակցի գրանցման ժամանակ նշած էլեկտրոնային փոստին կամ հեռախոսահամարին, իսկ ՀԲՄ-ին ուղղված հաղորդագրությունները՝ learning@uba.am հասցեին: Մասնակիցը պատասխանատու է իր կոնտակտային տվյալները թարմ պահելու համար:

13.2. Էլեկտրոնային հաղորդագրությունը համարվում է ստացված հասցեատիրոջ տեղեկատվական համակարգ մուտք գործելու պահից, եթե ուղարկողը չի ստացել չառաքման ավտոմատ ծանուցում կամ չի ապացուցվել այլ բան:

13.3. Ծառայության որակի, վճարման, վերադարձի կամ անձնական տվյալների վերաբերյալ դիմումը պետք է պարունակի Մասնակցի անունը, Ծրագրի անվանումը, կոնտակտային տվյալները, պահանջը և այն հիմնավորող տեղեկությունները: ՀԲՄ-ն հաստատում է դիմումի ստացումը և պատասխանում է ողջամիտ ժամկետում՝ պահպանելով օրենքով սահմանված ժամկետները:

14. Կիրառելի իրավունքը և վեճերի լուծումը

14.1. Պայմանագիրը և դրանից բխող հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

14.2. Կողմերը ձգտում են վեճը լուծել բանակցությամբ և գրավոր դիմումների փոխանակմամբ: Համաձայնության չգալու դեպքում վեճը լուծվում է ՀՀ իրավասու դատարանում՝ օրենքով սահմանված ենթակայության և ընդդատության կանոններով:

15. Եզրափակիչ դրույթներ

15.1. Պայմանագիրը գործում է դրա կնքման պահից մինչև կողմերի պարտավորությունների լրիվ կատարումը կամ օրենքով և սույն պայմանագրով նախատեսված հիմքով դադարելը:

15.2. Եթե սույն պայմանագրի որևէ դրույթ ճանաչվում է անվավեր կամ անկիրառելի, մնացած դրույթները շարունակում են գործել: Անվավեր դրույթի փոխարեն կիրառվում է պարտադիր իրավական նորմը:

15.3. ՀԲՄ-ն կարող է փոփոխել օֆերտան ապագա գրանցումների համար՝ Կայքում հրապարակելով նոր տարբերակը: Արդեն կնքված պայմանագրի նկատմամբ կիրառվում է ընդունման պահին գործող տարբերակը, բացառությամբ օրենքով պահանջվող կամ Մասնակցի համար ավելի բարենպաստ փոփոխությունների:

15.4. Մասնակիցը կարող է պահպանել կամ տպել սույն օֆերտան: ՀԲՄ-ն պահպանում է օֆերտայի կիրառված տարբերակի և Մասնակցի ակցեպտը հավաստող էլեկտրոնային գրառումները՝ օրենսդրությամբ և Գաղտնիության քաղաքականությամբ սահմանված ժամկետներում:

Հավելված 1 Պայմանագրից հրաժարվելու օրինակելի ձև

Այս ձևը կարող է օգտագործվել հեռակա կամ ձեռնարկության շենքից դուրս կնքված պայմանագրից հրաժարվելու համար: Այն լրացնելու փոխարեն Մասնակիցը կարող է ուղարկել նույն բովանդակությամբ այլ հստակ հայտարարություն:

Ում	«Հայաստանի բանկերի միություն» ՀԿ ՀՀ, ք. Երևան, Կորյունի փողոց 19ա, 6-րդ հարկ learning@uba.am
Հայտարարություն	Սույնով տեղեկացնում եմ, որ հրաժարվում եմ ստորև նշված ուսումնական ծառայությունների մատուցման պայմանագրից:
Ծրագրի անվանումը	_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը	_____
Մասնակցի անուն ազգանունը	_____
Էլեկտրոնային փոստ և հեռախոս	_____
Վճարման տվյալ կամ պատվերի համար	_____
Ամսաթիվ և ստորագրություն	Ստորագրությունը լրացվում է միայն թղթային ձևով ներկայացնելու դեպքում:

Ուղարկման հասցե՝ learning@uba.am